

ԿԻԼԻԿԻԱ

Խօսք՝ Ն. Ռուսինեան

Երբ որ բացուին դռներն յուսոյ
Եւ մեր երկրէն փախ տայ ձըմեռ,
Չըքնաղ երկիրն մեր Արմենիոյ
Երբ փայլէ իւր քաղցրիկ օրեր,
Երբ որ ծիծառն իր բոյն դառնայ,
Երբ որ ծառերն հագնին տերեւ՝
Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աշխարհ՝ որ ինձ ետուր արեւ:

Տեսի դաշտերն Սուրիոյ,
Լեառն Լիբանան եւ իւր մայրեր,
Տեսի զերկիրն Իտալիոյ,
Վենետիկ եւ իւր կոնտուլներ,
Կըղզի նման չիք մեր Կիպրեայ,
Եւ ոչ մէկ վայրն է արդարեւ
Գեղեցիկ քան զիմ Կիլիկիա,
Աշխարհ՝ որ ինձ ետուր արեւ:

Հասակ մը կայ մեր կենաց մէջ,
Ուր ամենայն իղձ կ'աւարտի,
Հասակ մը ուր հոգին ի տենչ՝
Յիշատակից իւր կարօտի,
Յորժամ քնարն իմ ցրտանայ,
Սիրոյն տալով վերջին բարեւ՝
Երթամ ննջել յիմ Կիլիկիա,
Աշխարհ՝ որ ինձ ետուր արեւ: